



Եվրասիա միջազգային համալսարանի 2010-2015 թթ ռազմավարական ծրագրի շրջանակներում 2012-2013 ուսումնական տարվա ընթացքում ռազմավարական նպատակների իրագործման ուղղությամբ իրականացված աշխատանքների վրաբերյալ ռեկտորի համառոտ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

Նախաբան

Վերջին մի քանի տարիներին ոչ պետական բուհերում բարձրագույն մասնագիտական կրթական գործունեության համար ստեղծվել են ոչ այնքան բարենպաստ պայմաններ : Պետական բուհերի հետ ունեցած անհավասար մրցակցային դաշտը և հատկապես նրանց նկատմամբ ցուցաբերվող պետական բարենպաստ քաղաքականությունը լուրջ դժվարություններ են ստեղծել նաև մեր համալսարանի գործունեության համար: Ստեղծված վիճակից դուրս գալու նպատակով համալսարանում մշակվել է յուրահատուկ ռազմավարական ծրագիր, որում համալսարանի տեսլականը և դրան համապատասխան առաքելությունը վերամշակվել են և համապատասխանեցվել ստեղծված նախադրյալներին, թե տեղական և թե միջազգային:

Հաշվի առնելով բարձագույն կրթության ոլորտում հաճախակի տեղի ունեցող կտրուկ և անկախատեսելի փոփոխությունները՝ բուհի կառավարման խորհուրդը կանորել է շուկայում արագ կոմերցովելու և կառավարման ճկուն համակարգի կիրառումը: Այդ փոփոխությունների կանխատեսումն ու դրանց համարժեք նախաձեռնողականությունը /պրոակտիվությունը/ դիտարկվել է որպես գերակայություն:

Մարդկային ռեսուրսների պարբերաբար վերապատրաստման միջոցով կրթական բարեփոխումների իրականացումը, կրթական բովանադակության վերափոխումն ու համապատասխանեցումը աշխատանքային շուկայի պահանջներին, որակի ապահովման ազգային և միջազգային չափանիշներին և այլն ունեն անկյունաքարային նշանակություն՝ բուհը որակապես նոր մակարդակի տեղափոխելու առումով: Բարեփոխումներն անհրաժեշտաբար զուգահեռվում են կրթական միջավայրի և օժանդակ ռեսուրսների անընդհատ կատարելագործմամբ, վերափոխմամբ՝ ժամանակի

պահանջներին համապատասխան: Բուհում բովանդակային և կառուցվածքային բոլոր բարեփոխումները թիրախային խմբի փոփոխության և բուհի միջազգայնացման նպատակ են հետապնդել:

Մինչև 2015թ. մշակված ու կառավարման խորհուրդի նիստում հաստատված համալսարանի ռազմավարական զարգացման ծրագրով նախատեսված են բազմաթիվ աշխատանքներ: Դրանք առնչվում են ընթացիկ ուսումնական գործընթացի կազմակերպման օպտիմալացմանը, բովանդակային և որակական բարելավումներին և հատկապես նորարարական տեխնոլոգիաների ներդրման միջոցով ուսուցման որակի բարելավման հարցերին: Նշված ժամանակահատվածում համալսարանը թևակոխել է լայնամաշտաբ բարեփոխումների ժամանակաշրջան: Դա բնութագրվում է խորհրդային ավանդական և մնացորդային ուսումնամեթոդական ու դաստիարակչական աշխատանքներից անցում կատարել ազատական, ուսանողակենտրոն, եվրոպական ժամանակակից համալսարաններին մոտ ուսումնական գործընթացների կազմակերպման: Այս ժամանակաշրջանը բնութագրվում է նաև նրանով, որ հատուկ աշխատանքներ են իրականացվել ուսանողների մոտ կրթության նկատմամբ մոտիվացման բարձրացման, զուտ տեսական մասնագիտական գիտելիքները գործնական մասնագիտական հմտություններին զուգակցելու և գործնական կարողություններով օժտված շրջանավարտներ պատրաստելու ուղղությամբ: Դրանք իրականակցվել են համալսարան-աշխատաշուկա կայուն համագործակցության զարգացման միջոցով:

Ուսումնական գործընթացներին զուգընթաց համալսարանը ավարտին է հասցրել կրեդիտային համակարգով ուսուցման աշխատանքները, բարելավվել է մասնագիտական ուսուցման մեթոդական բազան, ստեղծվել են նոր չափորոշիչներով կազմված մեթոդական ծրագիր-համալիրներ: Հատուկ կարևորություն է տրվել ուսուցման վիրտուալ բազայի ստեղծման աշխատանքներին, հատկապես՝ հեռակա ուսուցումը հեռավար ուսուցման կազմակերպման եղանակով իրագործելու համար: Համալսարանական բարեփոխումների մեջ հատուկ կարևորություն է ունեցել կառավարման էլեկտրոնային բազայի ստեղծումը, ներլսարանային աշխատանքի կազմակերպումը, տեղեկատվական տեխնոլոգիաների կիրառումը և այլն:

Բոլոնյան գործընթացը ենթադրում է համալսարանական բոլոր բնութագրումներով իրականացնել այնպիսի կրթական գործունեություն, որը բավարարի եվրոպական առաջավոր համալսարաններին ներկայացնող նվազագույն պահանջները: Առանց որի անհնարին է ինտեգրվել եվրոպական բարձրագույն կրթական դաշտում, առավել ևս՝ լիարժեք բավարարել բոլոնյան գործընթացի պահանջները: Այս առումով համալսարանը

հատուկ կարևորել է միջազգային զարգացման ծրագրերը և իրականացրել է մի շարք գործնական քայլեր:

Նշված ժամանակահատվածում համալսարանը վերականգնել է գիտակրթական հետազոտությունների կատարման նախկինում ունեցած ավանդույթները և դասախոսական կազմի, վարչական աշխատակիցների ու բարձր առաջադիմություն ցուցաբերած ուսանողների ջանքերով իրականացրել է բազմաթիվ հետազոտություններ, որոց արդյունքները հրատարակվել են առանձին տեղեկագրերով:

Նկատի ունենալով, որ հանրակրթական հաստատություններում դեռևս ընթանում են խորքային բարեփոխումներ և իրենց զգալ են տալիս նախկինից եկող ավանդական երևույթները, որոնք հակասության մեջ են մտել նոր, լիբերալ կրթությանը ներկայացնող պահանջներին՝ համալսարանի հիմնադիրների խորհուրդի որոշմամբ հիմնադրվել է նաև ավագ դպրոց-վարժարան, որտեղ իրականացվել են բազմաթիվ նորորարական կրթական ծրագրեր և որոնք էլ նպաստել են ուսուցման որակի բարձրացմանը (պատրաստվել են բարձր գիտելիքներով դիմորդներ): Ավանդաբար վարժարանից համալսարան ընդունվել են բավականին բարձր գիտելիքներ ունեցող և շատ մոտիվացված, ուսուցման նոր մեթոդներով զինված շրջանավարտներ:

Համալսարանում տարվել են ուսանողների և դասախոսական կազմի սոցիալական ապահովության հատուկ միջոցառումներ, որոնք արտահայտվել են ինչպես տարեցտարի աշխատավարձերի բարձրացման, այնպես էլ բարձր առաջադիմություն ունեցող և սոցիալապես անապահով ընտանիքների երեխաների համար մի շարք կրթաթոշակների սահմանմամբ, որոնք դրական դեր են խաղացել համալսարանում ընդհանուր ուսուցման արդյունավետության բարձրացման գործում: Համալսարանի առջև կանգնած խմբիկներից է եղել նաև Երևան քաղաքի և Կոտայքի մարզի դպրոցներում քաղաքապետարանի կրթության վարչության հետ համատեղ <<Քայլ առաջ>> ծրագրի իրականացումը, որում մասնակցել են հարյուրավոր աշակերտներ և ձեռք են բերել նոր հմտություններ:

Համալսարանի կառուցվածքը և կրթական գործունեության վերլուծությունը

ա/ կառուցվածքը և ստորաբաժանումները

Համալսարանը կառուցվածքայնորեն ներկայացված է երկու խումբ կրթական ծրագրերով՝ բարձրագույն և հանրակրթական:

Բարձրագույն մասնագիտական կրթական ծրագրերը իրականացվում են բակալավրիատի և մագիստրատուրայի կրթական աստիճաններով, ընդ որում

հանրապետության բուհերի մեջ համալսարան առաջիններից մեկը ներդրեց երկաստիճան կրթական համակարգը և հավատարմագրվեց այդ կրթական ծրագրերով:

Բակալավրիատի մասնագիտական կրթական բոլոր ծրագրերը ներկայացված են առկա և հեռակա ուսուցման ձևերով, իսկ մագիստրատուրայի ծրագիրը՝ միայն առկա: Համալսարանում գործում է 3 ֆակուլտետ՝ կառավարման, որը ներկայացված է <<Կառավարում և ֆինանսներ>> մասնագիտությամբ, իրավագիտություն և օտար լեզու՝ անգլերեն, գերմաներեն և ֆրանսերեն մասնագիտություններով: Նշված մասնագիտություններից բացի համալսարանում կառավարման մասնագիտության մեջ ներդրվել է նաև <<Էլեկտրոնային բիզնեսի>> կրկնակի դիպլոմի Լիտվայի Միկուլաս Ռոմերիս համալսարանի հետ մագիստրոսական կրթական ծրագիր:

Համալսարանն ունի լեզուների ուսուցման, հաշվապահական հաշվառման, բիզնեսի զարգացման, համակարգչային հմտությունների ուսուցման այլ դասընթացների կենտրոն: Գործում է նաև նախապատրաստական ֆակուլտետ:

Համալսարանը մասնակցում է Էրազմուս Մունդուս միջազգային ծրագրի աշխատանքներին, հանդիսանում է եվրոպական համալսարանական մի շարք ասոցիացիաների անդամ, մասնակցում է եվրոպական միջազգային կրթական համաժողովներին:

Հաստատված ռազմավարական ծրագրով համալսարանում ստեղծվել են մի շարք կառույցներ, ինչպես օրինակ՝ գիտական խորհուրդը, որակի ապահովման կենտրոնը, մեթոդական խորհուրդը, ուսանողական խորհուրդը և այլն /տես. գծապատկեր 1/:

Ավագ դպրոց- վարժարանը ներկայացված է նախամասնագիտական ուսուցման բոլոր հոսքերով: Այստեղ իրականացվում է մի շարք հեղինակային մեթոդական աշխատանքներ. գիտելիքի գնահատման նոր համակարգի ներդրում, կիսամյակից կիսամյակ և դասանից դասարան մնացորդային գիտելիքների պետական չափորոշիչին համապատասխանեցնելու նպատակով առարկայակն արտալսարանային լրացուցիչ կրթական ծրագրերի իրականացում, միջ առարկայական խորացված համագործակցության և դասընթացների ներդաշնակ թեմատիկ գործնական պարապմունքների պլանավորման, կրեդիտային համակարգով ուսուցման, տեղեկատվական նորարական տեխնոլոգիաներով ուսուցման կազմակերպման, վիրտուալ դասընթացների ստեղծման և այլ վերաբերյալ: Վարժպման, վիրտուալ դասընթացների ստեղծման և այլ վերաբերյալ: Վարժարանի շրջանավարտների կեսից ավելին համալրում են համալսարանի առաջին կուրս:

բ/ կրթական գործունեության բովանդակությունը

Դեռևս 2007թ հանրապետության բուհերից առաջիններից մեկը համալսարանում ներդրվել է կրեդիտային համակարգ: Այդ համակարգի նկատմամբ սկզբնական շրջանում բացակայում էր վստահությունը, չկային նախատիպային դրականորեն հուսադրող օրինակներ, հսկայական ջանքեր էր պահանջվում և դասախոսների և ուսանողների, և անձնակազմից ապացուցելու այդ համակարգի առավելությունները: Հարկադրաբար օգտվեցինք եվրոպական առաջավոր համալսարանների փորձի: Մշակվեց այդ համակարգի ներդրման համակողմանի ծրագիր. Իրականացնել բանավոր զրույցներ ներդրման կարգը գրավոր բաժանել բոլոր շահառուներին, հրատարակել այդ համակարգի ներդրման հատուկ տեղեկագիր, համակարգի բովանդակությունը, յուրահատկությունները, գնահատման սանդղակը, միջին որակավորման միավորների հաշվարկման մեթոդական, դրական և բացասական գնահատման նվազագույն շեմը: Այդ համակարգի ներդրման համար իրականացվել են համալսարանական ֆակուլտետային և կուրսային սեմինարներ, ստեղծվել են զանազան ձևանմուշներ. գնահատականների գնահատման թերթեր, ստուգման գրքույկ, դիպլոմի հավելված: Ուսանողների շրջանում հաճախակի կատարվել են հարցումներ՝ բացահայտելու այդ համակարգի դրական և բացասական կողմերը: Կրեդիտային համակարգին առնչվող բոլոր կարգի մեկնաբանությունները հրատարակվել և տեղադրվել են համալսարանի պաշտոնական կայքում:

ԵՄՀ-ի դասընթացների կրեդիտավորումը 2007թ. ընթանում է համաձայն Բոլոնիայի հռչակագրի, այդ իսկ պատճառով ԵՄՀ-ում կիրառվում է ECTS /կրեդիտների կուտակման և փոխանցման եվրոպական համակարգ/ գնահատման համակարգը: Մեկ ECTS կրեդիտը համարժեք է բակալավրի կրթական ծրագրում 36 ուսումնական ժամի և մագիստրոսական կրթական ծրագրում՝ 30 կրեդիտ: Կրեդիտները հաշվարկելիս, հաշվի են առնվում ինչպես ինքնուրույն աշխատանքների ծավալը, այնպես էլ լսարանային ժամաքանակը:

Նախատեսվում է , որ յուրաքանչյուր կիսամյակում միջին կարողություններով ուսանողը պետք է անցնի 30 կրեդիտի համարժեք դասընթաց, այսինքն այդ ուսանողի տարեկան բեռնվածությունը կկազմի 60 կրեդիտ /թույլատրվում է 10 տոկոս շեղում/:

Մեր կարծիքով համակարգի ներդրման հաջողությունը պայմանավորված է եղել ուսումնական պլանների, հարցաշարերի և հատկապես քննական առաջադրանքների մեթոդական ճիշտ հիմնավորվածությամբ կազման աշխատանքներից: Հատուկ ուշադրություն ենք դարձրել տեստերի կազման մեթոդիկային, ընդ որում տեստերը կազմվել են առարկայական ծրագրերի պահանջներով՝ նրանում զետեղելով անցած նյութի վերաբերյալ գիտելիքի բացահայտման, հարցադրումների տարբերակային

կռահման և ճիշտ կամ սխալ տեստերի բացահայտման: Որպես կարևորագույն մեթոդական պայման համալսարանի մեթոդախորհրդի որոշմամբ ատեստավորման առաջադրանքներում պարտադիր կարգով գետեղվել են բաց կամ տեքստային հարցեր, բացահայտելու ուսանողի վերլուծական, հետազոտական գրելու հմտությունները: Առանձին առարկաների ինքնատիպությունից ելնելով՝ թույլատրվել է նաև անհրաժեշտության դեպքում գրավորից բացի կիրառել նաև բանավոր քննություններ /օրինակ իրավաբնության մասնագիտության գծով բացահայտելու ուսանողի բանավոր խոսքի հմտությունները/:

Որակի ապահովման կենտրոնի աշխատակիցները միջանկյալ և ամփոփիչ քննությունների արդյունքները վերլուծելուց հետո ըստ նախապես հաստատված կանոնակարգի հարց են բարձրացնում ռեկտորատում քննարկելու մի դեպքում՝ կրթաթոշակներ շնորհելու, մեկ այլ դեպքում համալսարանից հեռացնելու վերաբերյալ: Որպես կանոն երկրորդ լուծարքին անհաջողության մատնված ուսանողները հեռացվում են համալսարանից և վերականգնվում են միայն մեկ տարի անց:

Բոլոնյան գործընթացի պահանջներից մեկն էլ եղել է նոր համաեվրոպական ձևանմուշի դիպլոմի հավելվածի հայերեն և անգլերեն ձևաթերթի մշակումը: Այդ աշխատանքները ավրտվել են , սակայն դեռևս նախարարության կողմից մասայական կիրառելու թույլտվություն չենք ստացել: Դեռևս ներկայումս նախարարության կողմից տրվող հայերեն, անգլերեն և ռուսերեն տարբերակը ուսանողության կողմից պահանջված է: Նոր չափանիշներով վերկառուցվել և բարեփոխվել են բոլոր մասնագիտական առարկաների պլանները, դրանք ենթարկվել են մասնագիտական փորձաքննության, տեղադրվել են կայքում և հրատարակվել ու բաժանվել ուսանողներին:

Վելուծությունը ցույց է տալիս, որ առաջնացը պայմանավորված է բազմաթիվ գործոններով, սակայն կարևոր դեր են խաղացել համալսարան-գործատու համագործակցության զարգացման միջոցով գործնական հմտություններով ուսումնական գործընթացի ուղեկցումը, տեղեկատվական տեխնոլոգիաներով ուսուցման կազմակերպան մաշտաբների ընդլայնումը, փոխներգործուն մեթոդներով հատկապես դասալրոցեսին ուսանողի մասնակցության ակտիվացման բարձրացումը, ինչպես նաև որակյալ ուսուցման նկատմամբ ուսանողների շրջանում մոտիվացման ուղղությամբ տարվող աշխատանքները:

Ավելացնենք, որ համալսարանում հատուկ աշխատանք է տարվում ցածր առաջադիմություն ցուցաբերող ուսանողների նկատմամբ: Այս ուսումնական տարում ուսանողների համակազմի թիվը 538 էր, ակադեմիական ցածր առաջադիմության պատճառով 15 ուսանող հեռացվել է համալսարանից:

Ուսանողների կիսամյակին և ամփոփիչ ատեստավորումները, իրականացվում են խստագույնս՝ պահպանելով ծրագրային պահանջները: Ուսանողների նախապես տրվում են առակայական ծրագրերի համալիրներ, մեթոդական օգնության համար նախատեսված օժանդակ նյութեր, հարցաշարեր: Յուրաքանչյուր դասընթացի գծով ուսանողը հնարավորություն ունի օգտվելու համալսարանի Moodle համակարգից, էլեկտրոնային կապի միջոցով մեթոդական օգնություն ստանալ դասխոսներից և մեթոդիստներից:

Ուսանողների միջև ներլսարանային մրցակցությունը ապահովելու, բարձր առաջադիմություն ցուցաբերող ուսանողների խրախուսելու և հատկապես սոցիալապես անապահով ընտանիքի երեխաներին աջակցելու նպատակով համալսարանը ամեն տարի շնորհում է կրթաթոշակներ: Կրթաթոշակները տրվում են <<Վիվասել ՄՏՍ>> ընկերության /տվյալ ուսումնական տարում ամենաբարձր մոգ ապահովող ուսանողների համար/, Թուրփանջյան ընտանիքի /տվյալ ուսումնական տարում մարզերից նյութապես անապահով ընտանիքից ուսանողի հասմար/, Ադուրյանների /տվյալ ուստարվա ընդունելիության քննություններին բարձր միավոր ապահոված դիմորդների համար/ կողմից: Ամենամյա խրախուսական կրթաթոշակ է համարվում <<Օհանյան>> պարգև, որը տրվում է տվյալ կիսամյակում ամենաբարձր առաջադիմություն ունեցող 10 լավագույն ուսանողներին: Նշված կրթաթոշակների համար մշակված են կարգեր և թերթիկների ձևով բաժանվում են ուսանողությանը: Ավելացնենք, որ ինչպես ուսանողների և դասախոսների միջազգային փոխանակաման ծրագրերում ակտիվացումը և գործնականում երկկողմանի իրականացվող տեղաշարժերը, այնպես էլ նշված կրթաթոշակները ուսումնական առաջադիմության բարձրացման լուրջ գործոններ են հանդիսացել:

Ուսուցման որակի ապահովման գլխավոր բաղադրիչ է հանդիսանում դասախոսներով ապահովվածության՝ հիմնական կարգավիճակով և համատեղությամբ աշխատող դասախոս-մանկավարժներով ապահովվածությունը, մասնավորապես գիտական աստիճան ունեցող առավել բարձր որակավորում ունեցող մասնագետներով ապահովվածությունը: Նկատենք, որ դասախոսական կազմի ճնշող մեծամասնությունը տիրապետում է տեղեկատվական տեխնոլոգիաների ժամանակակից համակարգերին և դասընթացները անցկացնում է փոխներգործուն մեթոդներով: Որպես առանձնահատկություն համալսարանի առումով ընդգծենք, որ ուսումնական աշխատանքներում ընդգրկված է առավելապես երիտասարդ մասնագետներ, որոնց միջին տարիքը 32 է և նրանց կեսից ավելին տիրապետում է անգլերենին և որոնց մի մասը արտասահմանյան երկրներում կրթություն ստացած կամ վերապատրաստված մասնագետներ են:

Որակի ապահովման կենտրոնի գործունեությունը

Ինչպես նախատեսված է ռազմավարական ծրագրով՝ 2007-ից ի վեր, համալսարանում գործում է որակի ապահովման և գիտելիքի գնահատման մեթոդական կենտրոն, որը համակողմանիորեն իրականացնում է ուսումնական գործընթացների ներդաշնակ և փոխալսմանավորված աշխատանքը՝ նպատակ հետապնդելով անընդհատ բարձրացնելու ուսուցման արդյունավետությունը և շրջանավարտների մասնագիտական որակը: Որպես ամփոփ ցուցանիշ օգտագործվում է էլքային ու վերջնական արդյունքների քանակական բնութագրումները: Ուսուցման որակին միտված աշխատանքները կազմում են միմյանց հաջորդող շարունակական գործընթացներ՝ սկսած դիմորդների ընդունելության մեկնարկային բարձր ցուցանիշների ապահովումից և կիսամյակային աստիճանաբար բարելավված ցուցանիշների ապահովումից մինչև պետական ավարտական՝ մասնագետների որակավորման քննությունները:

Որակի ապահովման կենտրոնի կողմից իրականացվող խնդիրներից են ստեղծել ուսուցման որակի կառավարման համակարգ՝ պլանավորելու, իրագործելու, ստուգելու, վերլուծելու, գնահատելու և բարելավելու ուսումնական գործընթացները և շահառուների համար հաստատել հնարավորինս ավելի բարձր չափորոշիչներ: Չափազանց կարևոր խնդիր է համարվում նաև համալսարանում մշտապես ուսուցման որակին միտված մշակույթի ստեղծումը և դրան հասնելու ընթացակարգերի մշակումը ու գործարկումը՝ ներառելով կրթական բոլոր ծրագրերը և ստորաբաժանումները:

- Պարբերաբար մշտադիտարկել ուսուցման որակի ապահովման առաջադիմական գործընթացները, հատկապես՝ կրթական ծառայությունների որակի բարձրացումն ու ընթացիկ բաելավումը
- Մշակել որակի ապահովման գործնականորեն կիրառելի ընթացակարգեր և դրանք օգտագործել կրթական և մասնագետների վերապատրաստման որակը բարձրացնելու, ինչպես նաև ուսանողների առաջնահերթ կարիքները բավարարելու նպատակով
- Իրականացնել մշտադիտարկման նպատակով այնպիսի հետազոտություններ, որոնք թույլ կտան գնահատել սովորողներին տրամադրվող ծառայությունների արդյունավետությունը և համապատասխանությունը որակի ապահովման պահանջների
- Բացահայտել ուսուցման որակի վրա բացասական ներգործություն ունեցող գործոնները և մշակել ծրագիր դրանք վերացնելու համար

- Մշտապես ծանոթանալ որակի ապահովմանը միտված արտասահմանյան առաջադեմ համալսարանների փորձին, որակի ապահովման և վերահսկողության այն նոր մեթոդական հնարքներին, որոնք կարող են տեղայնացվել և օգտագործվել համալսարանի կրթական ստրուկտուրային մասերում
- Որակի ապահովմանը նպատակաուղղված գործընթացները դարձնել թափանցիկ, որակի վերաբերյալ ստացված տվյալները դարձնել քննարկման առարկա՝ համոզված լինելով, որ շահառուների իրավունքները պահպանվում են
- Վերահսկել համալսարանի ռեսուրսների օգտագործման վիճակը և գնահատել եղած ռեսուրսները արդյոք նպաստում են ուսուցման բարձր որակի ապահովմանը

Նկատի ունենալով, որ համալսարանը գտնվում է ինտեսիվ բարեփոխումների փուլում՝ որակի ապահովման կենտրոնը մշակել է աշխատանքները իրականացման այնպիսի հաջորդականություն, որոնց իրագործումը կարող է դեր խաղալ ուսուցման որակի բարձրացմանը և համալսարանի գործունեությունը միջազգային չափանիշներին ավելի մոտ դարձնելու: Թվարկենք դրանցից մի քանիսը.

- ուսումնական ծրագիր – մեթոդական համալիրների որակի բարելավում և արդիականացում՝ առավելագույն չափով հաշվի առնելով մասնագետի նկատմամբ գործատուների ներկայացված ընթացիկ պահանջները
- դասախոսական կազմի մանկավարժական-մասնագիտական որակների բարձրացում՝ ուսուցման նորարարական տեխնոլոգիաներով աշխատելու հմտություններ զարգացնելու նպատակով սեմինարների իրականացում /արտասահմանից հրավիրված մասնագետների ուժերով/
- ուսումնական ռեսուրսների և ծառայությունների որակական բնութագրերի համապատասխանեցում՝ ՀՀ ԿԳ նախարարության ներկայացված չափորոշիչներին
- ուսանողների գիտելիքի գնահատման թափանցիկ համակարգի և որակի ապահովման տեղեկատվական համալսարանական համակարգի ստեղծում

Ուսուցման որակի անընդհատ բարելավման մեխանիզմների կատարելագործման նպատակով համալսարանում իրականացվում են կիսամյակային հարցումներ, որոնց ձևաթերթերը ընդգրկում են բազմաթիվ հարցեր. Ուսումնական ծրագրերի որակը, ռեսուրսներով ապահովված մակարդակը և դրանցից օտվելու մատչելիությունը, դասախոսների պատրաստվածությունը և ուսուցման մեթոդական, տեղեկատվական համապատասխան բազայով ապահովվածությունը հատկապես էլեկտրոնային զրականության առկայությունը և օգտվելու հնարավորությունները և այլն:

1. Նախագծերի կառավարման կենտրոնի, հասարակայնության հետ կապերի ու մարքեթինգային գործունեություն

Որպես ուսուցման որակի ապահովման լրացուցիչ գործոն ռազմավարական ծրագրում նախատեսված է նաև նախագծերի կառավարման կենտրոնի՝ որպես առանձին ստորաբաժանման գործառույթները: Կենտրոնը հիմնվել է 201.թ. որի գլխավոր նպատակն է գործող կրթական մասնագիտական ծրագրերին ներդաշնակ իրականացնել այնպիսի լրացուցիչ առավելապես կիրառական նշանակության գործառույթներ, որոնք նպաստում են բուն կրթական գործընթացների բարելավմանը: Կենտրոնը հաաջողությամբ իրականացրել է բազմաթիվ կարճաժամկետ և երկարաժամկետ նախագծեր, անցկացրել է համաժողովներ, բանավեճեր, սեմինարներ, կլոր սեղան քննարկումներ: Որոշակի աշխատանք է տարվել տեղեկատվական դաշտը ազատական դարձնելու, կրթական գործունեության վերաբերյալ տեղեկատվությունը ամփոփելու և տարածելու ու բազմաթիվ արտահամալսարանական միջոցառումների կազմակերպման ուղղությամբ: Կենտրոնի համար առանձին թեմա է դարձել տարիներ շարունակ իրականացվող <<Քայլ առաջ>> և <<Աշխարհը մի գյուղ է>> ծրագրերը: Առաջին ծրագիրը բնույթով, իրականացման մեթոդիկայով ուսուցողական բովանդակությամբ նորարարական է, իրականացվում է Երևան քաղաքի Քանաքեռ-Զեյթուն, Արաբկիր և Կոտայքի մարզի դպրոցներում: Ծրագիրը քննարկվել է Երևանի քաղաքապետարանի աշխատակազմի կրթության վարչությունում և արժանացել հավանության: Նշված համայնքների դպրոցներում ամեն տարի անցկացվում են բազմաթիվ թրեյնինգներ, որոնք ընդգրկում են նոր հմտությունների և կարողությունների ձեռք բերման ամբողջ շրջանակը. հետազոտելու և ստեղծագործելու, ժամանակը և նյութական ու ֆինասական ռեսուրսները խնայողաբար օգտագործելու, թիմում աշխատելու, չնախատեսված իրադարձության մեջ անսխալ կողմնորոշվելու և բազմաթիվ այլ հմտություններ /թվով 30-ից ավելի/: Այդ ծրագրում թեմատիկ առումով մեծ տեղ է հատկացվում առաջնորդային հմտությունների միջանձնային հարաբերությունների կառուցմանը առնչվող հարցերին: Ստացվում են բացառիկ դրական արդյունքներ, աշակերտները ներկայացնում են իրենց կռահումները, որոնք հաճախ ունենում գործնական նշանակություն: Ըստ դպրոցների թիմային աշխատանքների վերաբերյալ անցկացվում է մրցանակաբաշխություն և ցուցահանդես: Նշված ծրագրերը լայնորեն լուսաբանվել են զանգվածային լրատվության բոլոր միջոցներով:

<<Աշխարհը մի գյուղ է>> ծրագիրը նույնպես ունի ամենամյա պարբերականություն և այլ երկրների մշակույթի նկատմամբ աշակերտների մոտ մեծ հետաքրքրություն է առաջեցնում: Միջոցառումները բովանդակային առումով շատ ավելի հետաքրքիր են

անցնում, երբ դրանք նախապատրաստվում և անցկացվում են համապատասխան երկրներից ժամանած երկրների և համալսարնի մեթոդիստների համատեղ ուժերով: Այդ աշխատանքներին մասնակցել են Բրազիլիայից, Կանադայից, Լեհաստանից, Լիտվայից կամավորներ: Տարեց տարի ընդարձակվում է երկրների աշխարհագրությունը: Հաջորդ ուսումնական տարում նախատեսված է կամավորներ հրավիրել աշխարհի 9 երկրներից: <<Աշխարհը մի գյուղ է>> լրացուցիչ ծրագիրը հաջողությամբ իրականացվում է համալսարանում, աշակերտները ծանոթանում են ընտրված երկրների ազգային ավանդույթներին, տարազին, խոհանոցին, երաժշտությանը, տուրիստական արժեքներին և հատկապես Հայաստանի Հանրապետության հետ ունեցած համագործակցությանը: Ծրագիրը առավել տպավորիչ է անցնում, երբ ընտրված երկրների Հայաստանի Հանրապետությունում գործող դեսպանատները անմիջական աջակցություն են ցուցաբերում /ներկայացնում են զանազան բնութագրական առրակայանմուշներ/: Հատուկ անհրաժեշտ է ընդգծել այն ջերմ հարաբերությունները, ու առաջանում են աշակերտների և օտարերկրացիների միջև՝ ենթադրելով հեռանկարային կապերի պահպանում:

Հաշվետու ժամանակաշրջանում իրականացվել է 30-ից ավել նախագիծ /անգլերենի և բանավեճերի ակումբների պարապմունքների անցկացում, հետազոտական աշխատանքների իրականացում, սոցիալական ցանցերի ստեղծում, ամառային դպրոցի կազմակերպում, հասարակական կազմակերպությունների, հիմնադրամների և ուսանողական զանազան միությունների հետ համագործակցության հուշագրերի կնքում և այլն/, որոնք ֆորմալ կրթական ծրագրերի իրականացման գործում ունեցել են անփոխարինելի դերակատարություն, հատկապես աշակերտների և ուսանողների մոտ կրթության մոտիվացման բարձրացման տեսակետից:

ԵՄՀ-ն համագործակցում է մի շարք հասարակական կազմակերպությունների հետ: Տարիներ շարունակ կայուն համագործակցություն է իրականացնում <<Այսեկ>> ՀԿ-ի հետ, որը արտահայտվում է ուսումնական գործընթացներում արտասահմանյան երկրներից կամավոր հիմունքներով մեթոդիստներ հրավիրելու և ուսանողության ու աշակերտների համար լրացուցիչ կրթական ծրագրեր իրականացնելու միջոցով: Յուրաքանչյուր տարի համալսարանը ընդունում է միջինը 6 կամավորի:

Ակտիվ համագործակցություն է իրականացվում նաև <<Պրոֆեսիոնալները հանուն քաղաքացիական հասարակության>> ՀԿ-ի հետ. հետազոտական և ավարտական աշխատանքների ղեկավարման, ուսանողներին հետազոտական նախագծերում ներգրավման, գործնական հմտությունների զարգացման և այլ աշխատանքներ իրաքկանացնելիս:

Հատուկ նշենք համալսարանում տարվող ակումբային նախագծերի մշակույթը. շուրջ տարին գործում է անգլերենի, մարքեթինգային հետազոտության, բանավեճերի և մշակութային այլ ակումբներ /ՌԻՀԱ, հանդուրժողականության, դասական երաժշտության և այլն/:

2. Գրադարանի և հեռակա-հեռավար ուսուցման կենտրոնի գործունեությունը

Համալսարանը հատուկ ուշադրություն է դարձրել գրադարանի , որպես ուսումնական գործունեության կարևորագույն ստորաբաժանման, զարգացմանը: Դա արտահայտվել է ինչպես նոր ուսումնական նյութերի ձեռքբերման, այնպես էլ եղած ուսումնական նյութերի թվայնացման, առանձին դեպքերում էլ թարգմանության աշխատանքների տեսքով: Հատուկ աշխատանքներ են տարվել բոլոր դասընթացները և դասխոսության նյութերը, առարկայական ծրագրերը, հարցաշարերը, առաջադրանքների նմուշները և այլն էլեկտրոնային տարբերակով ներկայացնելու և ուսանողներին հասանելի դարձնելու ուղղությամբ:

Այս գործում էական նշանակություն ունեցավ ՀՀ ԿԳ նախարարության համապատասխան թույլտվությունը՝ հեռակա ուսուցումը հեռավար ուսուցման տեխնոլոգիաներով կազմակերպելու մասին: Ստեղծվեց հեռակա-հեռավար ուսուցման կազմակերպման համակարգ, որը հնարավորություն տվեց, հատկապես հեռավոր բնակավայրերից, հեռակա համակարգում սովորող ուսանողներին, առանց բացառիկ անհրաժեշտության Երևան մեկնելու, իրականացնել իրենց կրթական իրավունքը: Հետազոտությունները ցույց են տալիս, որ այս նոր համակարգով ուսուցումը դրական ազդեցություն է ունեցել ուսանողների ուսման առաջադիմության բարձրացման գործում: Ավելին, այդ համակարգը նախապայման հանդիսացավ նաև արտադրության մեջ արդեն ընդգրկված երիտասարդությանը, աշխատանքին զուգահեռ, սովորելու հեռակա-հեռավար համակարգով, վերաորակավորվելու և բարձրացնելու մասնագիտական որակավորումը: Նկատենք, որ դիմորդների շրջանում հեռակա-հեռավար ուսուցման նկատմամբ ավելի մեծ հետաքրքրություն է դրսևորվում, քան միայն հեռակ ուսուցման:

3. Ֆինանսատնտեսական գործունեություն

Հաշվետու ժամանակաշրջանում (2012թ.) անհատույց ակտիվների ամորտիզացիայից, միջազգային կրթական գործունեությունից, հիմնական միջոցի օտարումից, բանկի տոկոսներից, <<Տեմպուս>> միջազգային կրթական ծրագրից և ուսման վճարներից համախառն եկամուտը կազմել է 126,1 մլն. դրամ: Ընդ որում, համախառն եկամուտի 92.9 %-ը կազմել են բոլոր կարգի ծախսերը: Ծախսերի կառուցվածքում 68,4 % բաժին է ընկնում աշխատակիցների աշխատավարձին և գործատուի սոցվճարներին, 8,3% -ը կոմունալ և գրասենյակային ծախսերին, 6,9%` հիմնական միջոցների ամորտիզացիային, 3,0 %` գովազդային ծախսերին: Ոչ մեծ չափերի ծախսեր են կատարվել գործուղումների (0,7 %) , <<Տեմպուս>> ծրագրի (1,1%), նյութական ծախսերի (1,2%), վարչական ծախսերի (1 %) և այլն:

4. Տեղեկատվական համակարգեր

Հաշվետու շրջանը համալսարանի համար արդյունավետ է եղել տեղեկատվական համակարգերի զարգացման և ներդրման, կրթական նոր տեխնոլոգիաների կիրառման առումով:

Ներքին տեղեկատվական համակարգի զարգացում և ներդրում

Տեղեկատվական հոսքերի ապահովման և տվյալների, վերլուծությունների հիման վրա որոշումների կայացման նպատակով համալսարանի Տեղեկատվական համակարգերի կառավարման և Որակի ապահովման կենտրոնները նախաձեռնեցին Ներքին տեղեկատվական համակարգի զարգացումը (StudentM), որը հնարավորություն է տալիս կառավարելու ուսանողների անհատական տեղեկատվությունը, լավագույնս կազմակերպելու ինչպես ողջ բուհի, այնպես էլ յուրաքանչյուր ուսանողի անհատական ուսումնական պլանի կազմումը, արդյունավետորեն իրականացնելու գնահատման գործընթացը, վերահսկելու ուսանողների առաջադիմության հետ կապված խնդիրները, ինչպես նաև կարիերայի և զարգացման ընթացքը: Համակարգը հնարավորություն է ընձեռել ավտոմատացնել բուհի որոշ գործընթացներ, ինչպես նաև նվազեցնել թղթատարությունը: Հաշվետվությունների ենթահամակարգի օգնությամբ բուհի ուսումնական գործընթացի օպտիմալ կազմակերպման համար անհրաժեշտ տարաբնույթ հաշվետվությունների ստացումը կազմակերպվում է առավել արագ: Համակարգը փորձարկվել է և այժմ Ուսումնական մասի և ամբիոնների օգնությամբ գտնվում է ներդրման փուլում:

Այսպիսով, համալսարանի ռազմավարական նպատակը, այն է “բուհի հնարավոր բոլոր գործընթացների ավտոմատացում, տարբեր շահակիցների օգտագործման հնարավորությամբ տեղեկատվական բազայի ստեղծում, որոշում կայացնողների համար վերլուծությունների ստացման մատչելի մեխանիզմների և հնարավորությունների ապահովում, թղթաշրջանառության պակասեցում, աշխատանքների իրականացման վիրտուալ համակարգերի ապահովում” իրականացված է և առաջիկայում կկարողանանք գնահատել արդյունքի արդյունավետությունը:

Կրթական նոր տեղխոնուլգոհաներ

Տեղեկատվական համակարգերին առնչվող ռազմավարական հաջորդ նպատակը համալսարանի համար դասընթացի կառավարման վիրտուալ համակարգի ներդրումն է: Այս առումով առաջնային էր մարդկային ռեսուրսների վերապատրաստումը. համալսարանը կարողացավ ներգրավվել «Հարավային Կովկասում ինստիտուցիոնալ կարողությունների կառուցում և մարդկային ռեսուրսների զարգացում էլեկտրոնային ուսուցման համար Հարավային Կովկասում» վերապատրաստման ծրագրում, որը իրականացվում է գերմանական GIZ – Deutsche Gesellschaft für Internationale Zusammenarbeit կազմակերպության կողմից՝ Գերմանիայի Տնտեսական համագործակցության և զարգացման դաշնային նախարարության անունից: Ծրագրի շրջանակներում վերապատրաստվեցին ռազմավարական որոշում կայացնողներ, միջին օդակի ղեկավարներ կրթական ծրագրեր մշակողներ և առարկայական մասնագետներ և էլեկտրոնային ուսուցման օժանդակողներ (ֆասիլիտատորներ) և դասուսույցներ, ովքեր կաջակցեն սովորողներին առցանց դասընթացների ժամանակ: Ծրագրի շրջանակներում մշակվեց էլեկտրոնային ուսուցման բուհի ռազմավարությունը, ինչպես նաև մշակվեց և փորձարկվեց “Դասընթացի մշակման և կառավարման» էլեկտրոնային դասընթացը:

Դասընթացի կառավարման վիրտուալ նոր համակարգի մշակումը համարելով խիստ ծախսատար՝ համալսարանի ռազմավարական տվյալ ուղղության կայունության ապահովման նպատակով որդեգրվեց փորձարկված և մասնագիտացված բաց ռեսուրսների կիրառումը և տեղայնացումը: Հաշվետու տարվա ընթացքում ներդրվեց ուսումնառության կառավարման Moodle համակարգը, որին այժմ մուտք ունեն և ակտիվորեն կիրառում են համալսարանի ուսանողների (առկա և հեռակա համակարգերում սովորող) և դասախոսների մեծամասնությունը, համակարգում մուտքագրված են բոլոր դասընթացների էլեկտրոնային ռեսուրսները (գրքեր, դասախոսությունների սեղմագրեր, մեդիա նյութեր և այլն): Այս առումով առաջնային է դասախոսական կազմի վերապատրաստումների առավել ինտենսիվ իրականացումը՝ ուսումնառության վիրտուալ համակարգի ընձեռած հնարավորությունների առավել արդյունավետ օգտագործման և բուհում ուսուցման խառը մեթոդների արմատավորման նպատակով:

Համակարգում պարբերաբար թարմացվում է նաև վիրտուալ գրադարանը, ինչպես նաև աշխատանքի տեղավորման կայքերից ստացվող աշխատանքային թափուր տեղեր, կրթական ծրագրերի, դրամաշնորհների մասին հայտարարություններ:

SZS կիրառմամբ դասավանդման և ուսումնառության համար անհրաժեշտ պայմանների զարգացումը (նյութատեխնիկական բազայի հարստացում, մարդկային ռեսուրսների վերապատրաստում, անհրաժեշտ օժանդակ ենթակառուցվածքների զարգացում), ինչպես նաև կրթական բովանդակության թվայնացումը համալսարանի ղեկավարության ուշադրության կենտրոնում է և համարվում է գերակա խնդիր:

5. Միջազգայնացում

Համալսարանի կատարած աշխատանքները միջազգայնացման, մասնավորապես ուսանողների, պրոֆեսորադասախոսական և վարչական կազմի միջազգային շարժունության հնարավորությունների ստեղծման, ինչպես նաև կրթության բովանդակության և մեթոդների վերանայման, փորձի փոխանակման ուղղությամբ եղել են շոշափելի: Հաշվետու շրջանում վերափոխվել են համալսարանի միջազգային համագործակցության բաժնի պարտականությունների շրջանակը՝ ուղղելով առավել ռազմավարական խնդիրների լուծմանը:

Համալսարանը հաշվետու տարվա ընթացքում ներգրավվել է Եվրոպական հանձնաժողովի Էրազմուս Մոնդուս Գործողություն 2 միջազգային շարժունության երեք կոնսորցիումներում (ALRAKIS, ALRAKIS II, MID), ինչը ուսանողների, պրոֆեսորադասախոսական և վարչական կազմի համար Եվրոպական բուհերում ուսումնառելու, վերապատրաստվելու, հետազոտական աշխատանքներ իրականացնելու լավագույն հնարավորություններից է (բոլոր ծախսերը հոգում է Եվրոպական հանձնաժողովը): Ըստ ուսումնասիրությունների, ծրագիրը, ստեղծած հնարավորություններից զատ ունեցել է նաև անուղղակի ազդեցություն ուսանողների առաջադիմության բարձրացման վրա. ծրագրին կարող են մասնակցել լավագույնները, ովքեր տիրապետում են օտար լեզուների: Պահանջներին համապատասխանելու նպատակով ուսանողների մոտ նկատվել է նպատակային աշխատանք ուսման առաջադիմությունը բարձրացնելու ուղղությամբ: Համալսարանը իր հերթին, ուսանողների մոտ նկատվող հիմնական բացի՝ լեզուների իմացության, լրացման նպատակով իրականացրել է անվճար դասընթացներ և տրամադրել խորհրդատվություն ծրագրի և դիմելու ընթացակարգի վերաբերյալ: Վերոհիշյալ երեք ծրագրերն էլ մեկնարկել են և կգործեն մինչև 2016 թվականը:

Միջազգային համագործակցության շրջանակներում համալսարանի ձեռքբերումներից է եղել Հատուկ կարիքներով մարդկանց հասանելիությունը հասարակությանը» (ASPIRE) TEMPUS IV ծրագրում ներգրավվածությունը. ԵՄՀ-ն առաջին մասնավոր բուհն է, որը ստացել է Եվրոպական խորհրդի վստահությունը, ոչ միայն մասնակցելու, այլ նաև հանդես գալու որպես ծրագրի հայաստանյան կոորդինատոր: Ծրագրի նպատակն է աջակցել առանձնահատուկ կարիք ունեցող անհատների կրթական իրավունքի մատչելիությանը և առօրյա հասարակական կյանքին նրանց ինտեգրմանը, պայքարել առանձնահատուկ կարիք ունեցող անհատների նկատմամբ կիրառվող խտրականության դեմ՝ Բոլոնիայի գործընթացին և ՄԱԿ-Ի Հաշմանդամների իրավունքների մասին կոնվենցիային համապատասխան, արմատավորել հասարակության մեջ իրազեկվածություն և հանդուրժողականություն: Ծրագրի շրջանակներում ԵՄ Կարգավորման մեթոդով (Tuning) կմշակվեն ուսումնական ծրագրեր, կվերապատրաստվեն մարդկային ռեսուրսներ տվյալ թիրախային խմբի հետ աշխատելու և վերջիններիս համար կրթական ծրագրեր մշակելու համար, կստեղծվի համընդհանուր առցանց հարթակ, կիրականացվի տեխնիկական վերազինում և գրադարանային ռեսուրսների հարստացում:

Վերոհիշյալ ծրագրերի (TEMPUS և Էրազմուս Մունդուս) կոնսորցիումների անդամ բուհերի հետ սերտ համագործակցելուց զատ՝ համալսարանը կնքել և գործարկել է նաև մի շարք պայմանագրեր՝ ուղղված ուսանողների փոխանակման, համատեղ հետազոտական և կրթական ծրագրերի իրականացմանը. մասնավորապես համագործակցության պայմանագիր է կնքվել լեհական Լոդզ համալսարանի, Ղազախստանի Ամերիկյան համալսարանի, Հոմի բիզնեսի դպրոցի, Լոնդոնի բիզնեսի և ֆինանսների դպրոցի, ՌԴ Եվրասիական բաց համալսարանի հետ. նշված բուհերի հետ իրականացվում է կրեդիտների փոխճանաչում, իսկ առավել ընդգրկուն կրթական և հետազոտական ծրագրերը նախագծման փուլում են:

Ուսանողների շարժունության, որակավորումների միջազգային «թափանցիկությունը» և «արդար» ակադեմիական ու մասնագիտական ճանաչումը ապահովելու նպատակով համալսարանը մշակել և տրամադրում է դիպլոմի հավելված՝ Եվրախորհրդի և ՅՈՒՆԵՍԿՕ/ՄԵՊԵՍ-ի կողմից մշակված ձևին համապատասխան: